

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պայմանագիրը դադարում է գործել հետևյալ դեպքերում.

- 1) Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
- 2) այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով Ապահովագրավճարի հերթական վճարումը չի կատարել:
- 3) դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու դեպքում,
- 4) ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում,
- 5) Ապահովադրի լուծարման դեպքում,
- 6) Ապահովադրի (Շահառուի) կողմից գույքի օտարման դեպքում,
- 7) Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ,
- 8) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Եթե Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է, Ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորության վերանալու պատճառով և Ապահովագրական ռիսկի գոյությունը դադարում է Ապահովագրական պատահարից գատ այլ հանգամանքներից ելնելով (օրինակ ապահովագրված գույքի ոչնչացումը ոչ ապահովագրական պատահարի հետևանքով) Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերի համար համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (Ապահովագրավճարի 35%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե Պայմանագրում նախատեսված չեն այլ պայմաններ:

Վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$\text{ՎԱ} = \frac{(U - 35\% * U) * n}{N} - \text{Հ},$$

U՝ Պայմանագրով վճարված Ապահովագրավճարը,

35%*U՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերը,

n՝ Պայմանագրի գործողության ավարտին մնացած ամբողջական ամիսները,

Հ՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,

N՝ ամբողջական ամիսների քանակը, որոնց ժամկետով կնքվել է Պայմանագիրը,

ՎԱ՝ վերադարձման ենթակա Ապահովագրավճարը

Վերը նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրավճարը չի վերադարձվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: